«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Բայյան Քրիստինե
Ուսումնական հաստատություն՝ ք.Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....- 2 -
Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացվածության մակարդակները - 4 -
Ո՞րն է ընթերցանության նպատակը տարրական դասարաններում.....- 5 -
Ընթերցանության մեթոդները տարրական դպրոցում .....- 6 -
Ինչպե՞ս ընթերցանությունը կրտսեր դպրոցականի համար դարձնել հետաքրքիր.....- 9 -
Գրական ունկնդրումը տարրական դասարաններում.....- 11 -
Ընթերցանությունն էլ ավելի հաճելի է բնության գրկում .....- 13 -
Եզրակացություն .....- 14 -
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....- 16 -

«Կրթությունն ամենահզոր զենքն է, որը
դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար:
ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ

Ներածություն

Թեմայի արդիականությունը:Հանրակրթության վերակառուցման արդի շրջանում, երբ դրված է աշակերտներին ժամանակակից գիտությունների հիմունքներով զինելու և հատկապես՝ նրանց մտածողության, լեզվական գրագիտության և սովորել սովորելու կարողունակության զարգացման պահանջը, ամենևին էլ պատահական չէ, որ աշակերտի կարողությունները դիտարկվում է որպես առաջնային կարևորություն ունեցող խնդիր:Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խոսքի տիրապետման լավագույն հասակը կրտսեր դպրոցական տարիքն է:Ուստի պատահական չէ, որ կրտսեր դպրոցում կրթության և դաստիարակության աշխատանքների իրականացումն ուղղակիորեն կապվում է աշակերտների մեջ խոսքի կուլտուրայի մշակման և զարգացման հետ: Խոսքը մտածողության արգասիք է: Որքան զարգացած է մարդու մտածողությունը, այնքան գրագետ է կառուցվում նրա խոսքը, և որքան զարգացած է մարդու խոսքը, այնքան զարգացած է նրա մտածողությունը:Երեխայի խոսքի զարգացումն սկսվում է վաղ տարիքում:Երեխաների ամենօրյա գործունեությունն ուղեկցվում է մեծերի և հասակակիցների հետ խոսակցական շփմամբ, այսինքն՝ խոսքը պահանջում է համապատասխան հաղորդակցության միջավայր: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց երեխաների առօրյա են ներխուժել համակարգչային նորագույն խաղեր, որոնք ինչպես հայտնի է, չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ:Երեխաներն, ավելի շատ ժամանակ անցկացնելով համակարգիչների առջև կամ հեռախոսներով խաղալիս, գրեթե չեն հաղորդակցվում հասակակիցների հետ, պակասել է սերը ընթերցանության նկատմամբ, ինչի արդյունքում նրանց բառապաշարը շատ աղքատ է: Հաղորդակցության խնդիրն ապահովվում է նախ և առաջ մայրենի լեզուն:

Նպատակը և հետազոտական հարցը: **Ի՞նչ մեթոդներ և հնարներ կիրառել ընթերցանության նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու նպատակով:**

Աշխատանքի հիմնական նպատակն է՝ ուսումնասիրել ընթերցանության ուսուցման իրականացման հնարավորություններն ու ուսոցման տարբերակները տարրական դասարաններում և ներկայացնել ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դասարաններում, ներկայացնել կրտսեր դպրոցականների ընթերցելու կարողությունները, ընթերցանության որակն ու խոսքի զարգացումն ապահովող մեթոդների և եղանակների առաւջարկություններ:Մայրենի լեզվի

բառապաշարի ուսուցման ձևերն ու մեթոդները:Փորձարկել և բացահայտել այնպիսի հնարներ,որոնք կնպաստեն ընթերցանության միջոցով կրտսեր դպրոցաուսուցման իրականացման հնարավորություններն ու տարբերակները տարրական դասարաններում դպրոցականների բառապաշարի հարստացմանն ու հասակակիցների հետ համագործակցության կարողությանը:

Աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, հիմնական մասից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացվածության մակարդակները

Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացվածության մակարդակների շուրջ տարվող ուսումնասիրությունները խարսխվում են մանկավարժական գրականության մեջ սահմանազատված մարդու խոսքի զարգացման փուլերի **վրա: Այդ փուլերը թեև տարբեր հեղինակներ ներկայացրել են այլազան դիրքորոշումներով,սակայն ամբողջության մեջ՝բոլորն էլ սահմանում են հետևյալ կերպ.**

1. մանկական տարիք (մինչև 1 տարեկան)՝ գեղգեղանք և թոթովանք
2. մսուրային տարիք (մինչև 3 տարեկան) բառի հնչյունային և վանկային կառուցվածքի,նախադասության բառերի մեջ գոյություն ունեցող պարզ կապակցությունների տիրապետում (երկխոսությունային և իրադրությունային խոսք)
3. նախադպրոցական տարիք (3-ից մինչև 6 տարեկան)՝մենախոսության և ենթատեքստային խոսքի,պարզ ներքին խոսքի դրսևորում
4. կրտսեր դպրոցականի տարիք (6-ից մինչև 10 տարեկան)՝խոսքային ձևերի ըմբռնում(բառի հնչյունային կազմ,բառապաշար,խոսքի քերականական կառուցվածք),գրավոր և բանավոր խոսքի,նրանց մատչելի նորմերի տիրապետում,մենախոսելու կարողության բուռն զարգացում
5. միջին դպրոցական՝դեռահասության տարիք (10-ից մինչև 15 տարեկան)՝խոսի գրական նորմերի,ոճի ըստ ամենայնի տիրապետում,անհատական ոճի ձևավորում
6. ավագ դպրոցական՝ պատանեկության տարիք(15-ից մինչև 17 տարեկան),խոսքի մշակույթի կատարելագործում,լեզվի առանձնահատկությունների տիրապետում,անհատական ոճի ամրապնդում և կատարելագործում:

Մեթոդական այս խնդիրները լուծվում են այն գիտությունների միջոցով, որտեղից մեթոդիկան ստանում է իր համար առաջնային կարևոր տեղեկություններ: Այդ գիտություններից կարևորագույնները լեզվաբանությունն է, հոգեբանությունը և մանկավարժությունը: Լեզվաբանական, հոգեբանական և մանկավարժական տեսությունները հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի տեսական հիմքերն են, հետևաբար խոսքի զարգացման մեթոդիկայի համար հիմնական բազա են:Կարևոր դեր են խաղում նաև բնագիտական, ֆիզիոլոգիական հիմքերը խոսքի զարգացման գործընթացում: ՀՀ կրթության մասին օրենքում նշվում է. «Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է աշակերտի լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը»: Վերոհիշյալ դրույթներից կարող ենք եզրակացնել, որ տարրական

դասարաններում անհրաժեշտ է ապահովել սովորողների ուսումնական գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորումը: Որպեսզի մարդը արդի հասարակությունում պահանջարկ ունեցող և ճանաչված լինի, նրան պետք է մանկուց սովորեցնել մտածել, կարողանալ խոսքով արտահայտել իր մտքերը, համաձայնել կամ հերքել, երևակայել և պատկերացնել:Այլ կերպ ասած՝ երեխային պետք է պատրաստել նրան, որ նա կարողանա արձագանքել աշխարհի բազմազանությանը:

Ո՞րն է ընթերցանության նպատակը տարրական դասարաններում

Տարրական դպրոցում մայրենիի դասի գլխավոր նպատակները երեխաներին կարդալու բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալ սովորեցնելն է :Ընթերցանությունը, մայրենի լեզվի քերականությունը գիտելիքների ձեռքբերումը և ամրապնդումը դիտվում է որպես գրավոր և բանավոր գրագետ խոսք կառուցելու լեզվամտածողության և հայեցի հոգեկերտվածքի ձևավորման կարևոր գործնական միջոց:Կարդալու ուսուցումը տարրական դասարաններում մայրենի լեզվի դասի հիմնական նպատակն է:Արդի ժամանակաշրջանում շատ տարբեր իմաստներ են արտահայտում <<կարդալ>>,թե <<ընթերցել>>: Ընթերցելը արվեստ է ,որը ձևավորվում է վաղ տարիքում և շարունակվում զարգանալ ողջ կյանքի ընթացում:Ուսուցման այբենական շրջանում երեխաների մեջ ձևավորվում են կարդալու նախնական կարողություններ: Նրանք կարողանում են կարդալ փոքրիկ բնագրեր,պատասխանել բնագրերի վերաբերյալ ուսուցչի տրված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը:Այս ամենը աշակերտին նախապատրաստում են բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող դասին: Կարդալու կարողությունների մշակման արդյունավետությունը նախնական փուլում հատկապես նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը: Պարզ է, որ մեկ տողն ընթերցելիս հմուտ ընթերցողի աչքերը կատարում են 3-6 կանգառ,որոնց ժամանակ տեղի է ունենում կարդացածի գիտակցում և հասկացում:Անհասկանալի մտքի կամ բառի դեպքում ,բնականաբար ընթերցողի աչքերը կրկնում են շարժումը վերադառանով ընթերցածին: Հոգեբանները առանձնացնում են կարդալու հմտությունների ձևավորման 3 փուլ.

1. վերլուծական

2.համադրական

3.ավտոմատացված

Առաջին՝ **վերլուծական փուլում**, տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը:

Համադրական փուլում ամենափոքր միավորը դառնում է բառը:

Ավտոմատացված՝ կարդալու ժամանակ կարդալու միավորը նախադասությունն է:Կարդալը 6-7 տարեկան երեխայի համար բարդ աշխատանք է,որն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով (մտածողություն, հիշողություն, կամք, զգացմունք և այլն): Առաջին դասարանցին, ուշադրությունը բևեռելով կարդալու գործընթացի մեխանիկական կողմին, ոչ միշտ է հասկանում իր կարդացածը ,այդ պատճառով էլ նա մի քանի անգամ կրկնում է վանկերը կամ բառերը: Հաճախ աշակերտները առանձին բառեր ոչ թե կարդում են,այլ ձգտում են գուշակել՝ կարդալով միայն դրանց առաջին վանկը: Երեխայի կարդալու հմտության ձևավորման հետ այս երևույթներն աստիճանաբար անհետանում են:

Ընթերցանության ըմբռնումը կախված է ոչ միայն երեխայի կարողությունից, այլև հատվածի բովանդակությունից: Ընթերցանության տեխնիկայի այս բաղադրիչը ստուգելու համար խորհուրդ է տրվում օգտագործել պարզ տեքստեր, որոնցում կան մի քանի երկար նախադասություններ: Իսկ գնահատականը թող դրվի մնացածի ֆոնին:

Ընթերցանության մեթոդները տարրական դպրոցում

Տարրական դասարանների մայրենի լեզվի դասակարգերում զետեղված ստեղծագործությունների դասարանական ընթերցումն իրականացնում են ուսուցիչն ու աշակերտները:Նյութի դասարանական ընթերցումը կարևոր՝ դեր ունի աշակերտի՝ լավ կարդալու կարողությունների զարգացման և կատարելագործման ,ինչպես նաև բովանդակության ճիշտ ընկալման առումով: Այսպիսով լավ կարդալ նշանակում է կարդալ ճիշտ,հասկանալով,սահուն և արտահայտիչ: Լավ կարդալու հմտությունը միանգամից չի ձևավորվում :Այն իրականանում է քայլ առ քայլ,և յուրաքանչյուր քայլ ապահովում է հաջորդի ամրությունն ու ամբողջականությունը: Լավ կարդալ սովորեցնելու համար երեխաներին պետք է սովորեցնել՝

1. կարդացած ստեղծագործության յուրաքանչյուր միտք ,դեպք վերլուծել.
2.բացատրել և մեկնաբանել բնագրի յուրաքանչյուր բառի արտահայտության իմաստը և հիմնական միտքը.
3.ձեռք բերած տեղեկատվությունը համեմատել իր իմացածի ,ճանաչածի հետ:

Կարդալու տեսակները

Դասարանում բնագրի ընթերցումը կարելի է իրականացնել մի քանի ձևով ՝ ձայնով կամ բարձրաձայն, լուռ կամ մտքում,շարունակելով ,բացատրելով կամ մեկնաբանելով ,ընտրովի ,դերերով:Սրանցից յուրաքանչյուրը ունի իրականացման որոշակի մեթոդիկա:

Տարրական դասարաններում ավելի տարածված է ձայնով կարդալը, քանի որ այսպիսի ընթերցումը նպաստում է կարդալու կարողությունների մշակմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև ձևավորում է կարդացածը հասկանալու կարողություն: Ձայնով կարդալու միջոցով ուսուցիչն աշակերտներին տալիս է արտահայտիչ կարդալու նմուշ, հայտնաբերում է երեխայի կարդալու գործընթացի թերությունները: Մտքում կարդալը փոքրիկ դպրոցականների համար դժվարություն է ներկայացնում: Նրանց ուշադրությունը դեռևս կամային չէ, ցրված է, և երեխաները արագ կարող են շեղվել: Արդյունքում երեխան կարող է մատը տողերի վրայով սահեցնել ,սակայն մտքով ուրիշ տեղ գնալ: Ձայնով կարդալը լինում է երկու տեսակ՝ բարձրաձայն և ցածրաձայն,որոնք օգտագործվում են գործող անձանց հոգեվիճակները արտահայտելու համար:Բարձրաձայն ընթերցանությունը թիմային աշխատանք կատարելու (կարդալ շարունակելով,ընտրովի,դերեով և այլն) անփոխարինելի միջոց է և ոչ միայն միավորում է տվյալ դասարանի բոլոր աշակերտների ուշադրությունը, այլ նաև ուղղորդում է ողջ դասարանին կարդալ՝ մտքում (աչքերով) հայացքով հետևելով ընկերների ընթերցանությանը և իմաստավորելով կարդացածը: Բարձրաձայն ընթերցանությանը տարրական դպրոցում մեծ տեղ է տրվում նաև այն բանի համար,որ այդ ձայնով կարդալիս ընթերցանության գործընթացին մասնակցում են երեխաների ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը ,այլև ականջները,որքան շատ զգայարան մասնակցի ուսուցման գործընթացին,այնքան այդ գործընթացը արդյունավետ կլինի: << Ձայնով կարդալը ոչ միայն երեխաների մեջ մշակում ու զարգացնում է կարդալու հմտությունները,այլ նաև սովորեցնում է խոսելու օրգանները,ձայնը և շնչառությունը ճիշտ կառավարելու արվեստը,որը կատարելության է հասնում ասմունքողների մոտ>>:

Տարրական դասարաններում բարձրաձայն կարդալուն զուգընթաց պահանջվում է լուրջ աշխատանք մտքում կարդալու կարողության մշակման ուղղությամբ:

Լուռ կարդալը մտքում կարդալն է ,որն իրականացվում է դասարանում ուսուցչի հսկողության ներքո: Անցնելով մտքում կարդալուն՝աշակերտը սկսում է հասկանալ նյութը և յուրացնել այն ներքին խոսքով: Բայց յուրացնելով նյութը ՝կրտսեր դպրոցականը հաճախ դժվարանում է բառերով արտահայտել այն կամ հասկացածը հաղորդելուրիշ մարդկանց: Ես կարծում եմ նման դեպքերում օգտակար է խորհուրդ տալ բարձրաձայն պատմել այն,ինչ կարդացել ու հասկացել են:

Շարունակելով կարդալ Կարդալու այս տեսակը շատ արդյունավետ է տարրական դասարաններում:Երբ ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը կարդում է,ամբողջ դասարանը աչքերով հետևում է ընկերոջ ընթերցանությանը՝ պատրաստ շարունակելու այն հատվածից,ուր կընդհատի ընթերցողը ուսուցչի

պահանջով: Ըստ իս կարդալու այս գործընցացի միջոցով միանգամից կարդում է ամբողջ դասարանը:Պետք է նկատի ունենալ,որ շարունակելով կարդալու ժամանակ չի կարելի պատահական հատվածից շարունակել տալը՝ընդհատելով երեխայի ընթերցանությունը: Անհրաժեշտ է թույլ տալ ,որ կարդացողը հասնի մտքի տրամաբանական ավարտին ,դեպքի նկարագրությանը և այլն ,նոր հանձնարարել մեկ ուրիշին՝ շարունակել կարդալը:

Հեղինակային աթոռ մեթոդը շատ արդյունավետ է երեխաների շրջանում:Մեթոդի էությունը կայանում է հետևյալում՝ դասարանի լավագույն ընթերցողը նստում է ուսուցչի աթոռին և ընթերցում նյութը: Այս մեթոդը լավ խթան է հանդիսանում երեխաների շրջանում ընթերցանության մեջ մրցակցել միմյանց հետ և ձգտել դեպի ավելի լավ,վարժ ընթերցանության: Ընտրովի ընթերցանությունը կրտսեր դպրոցում հանձնարարվող մեկ ուրիշ ձև է,որի ժամանակ աշատերտն ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն գործող անձի խոսքերը, որևէ հատվածը կամ միտքը ,դուր եկած տողերը և այլն:

Ընտրովի ընթերցանությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի միջոցով ,որոնք աշակերտից պահանջում են ոչ թե մեխանիկորեն կարդալ անհրաժեշտ հատվածը,այլ նրան մտածել են տալիս կարդացածի շուրջ ,օգնում են մեկ անգամ ևս վերլուծել նկարագրված դեպքերը,հերոսների արարքները,քննարկել, տրամաբանել և այդ հիմքի վրա նոր ընտրել ու կարդալ տեքստի որոշակի հատված:

Ընտրովի ընթերցանությունը պիտի նախորդի դերերով ընթերցանությանը,որովհետև այս տարբերակի ժամանակ երեխաները ծանոթանում են ստեղծագործության հերոսների հետ,հասկանում են նրանց արարքների դրդապատճառները, իմաստավորում և յուրացնում են նրանց խոսքերը , որոշում և մտապահում յուրաքանչյուր հերոսի խոսքի տեղը բնագրում, և դերերով ընթերցելիս նրանք չեն շփոթվում,դերը՝ կատարում են հասկանալով:

Դերերով կարդալուն երեխաներին պետք է նախապատրաստել:Նախ կարևոր է.

1.դերերի բաշխումը կատարել աշակերտների ցանկությամբ,

2. որևէ դեր չպարտադրել,եթեաշակերտը չի կամենում այն կարդալ

3.երբեք երեխաներին չնմանեցնել հերոսներին:

Կարծում եմ ընթերցանության ներկայացված մեթոդները ամենատարածված տեսակներն էին:Բոլորն էլ մեր՝ մանկավարժներիս կողմից բազմիցս փորձված,մշակված:

Ինչպե՞ս ընթերցանությունը կրտսեր դպրոցականի համար դարձնել հետաքրքիր

Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում:Տարրական դասարանների մայրենի լեզվի դասընթացում առաջնային տեղ է գրավում ընթերցանությունը:Դրա նպատակն է՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը: Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում են նաև դաստիարակչական լուրջ **խնդիրներ՝** գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային մի շարք հատկանիշների դաստիարակում:

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտներին ընթերցել փոքր ծավալով ստեղծագործություններ:Հայտնի փաստ է, որ ընթերցանության կարողությունների ձևավորման համար հիանալի միջոց է բարձրաձայն ընթերցումը, որը հնարավորություն է տալիս լսելու և գնահատելու սեփական խոսքը, բարելավելու նրա արտահայտչականությունը:Խոսքի արտահայտչականության զարգացման գործում անգնահատելի է դերերով կարդալը, բնագրի դրվագների, մանրապատումների բեմադրությունը:Դրանց մեծ տեղ է տրված կրտսեր դպրոցում: Նպատակն է նպաստել աշակերտների կարդալու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև դյուրամարս և սահուն դարձնել ընթերցվող նյութի միավորների աստիճանականացումը՝ տառ-բառ-բառակապակցություն-նախադասություն, ինչպես նաև լուռ ընթերցումից բարձրաձայնին անցումը:Վարժանք- առաջադրանքներն իրենց բնույթով դիդակտիկ խաղերն են, որոնց կատարումը հաճույք է պատճառում երեխաներին:

Խաղը ցանկացած ուսումնական գործընթաց դարձնում է հետաքրքիր և հաճելի: Անգամ ամենաթույլ երեխան խաղի տեսքով կազմակերպված դասին հաճույքով է մասնակցում: Հասկանալով կարդալու կարողության ձևավորման համար օգտակար է կիրառել մեթոդը: Այս մեթոդի հիմնական բաղադրամասերն են՝ զրույցը,բառային աշխատանքը, նյութի մշակումը,բովանդակության վերարտադրումը և ամփոփումըկամ տրամաբանական եզրակացությունը:Դասարանում կատարվող յուրաքանչյուր նյութի ուսումնասիրությունը մենք ավարտում ենք ամփոփումով: Բնագրի վրա տարվելիք աշխատանքներն ավարտելուց հետո այն ամփոփում ենք՝ հիմնականում կանգ առնելով երեք կարևոր հարցերի վրա, դրանք են՝

ա) նյութի ուսումնասիրությունից ստացած գիտական,ճանաչողական նոր տեղեկությունները

բ) նյութից հանվող դաստիարակչական-բարոյական հետևությունները

գ) նյութի լեզուն՝ բառերը, դարձվածքները, արտահայտություններ

Ընթերցանությունը պետք է ծառայի արժեքային համակարգի ձևավորման, մարդկային բարձր արժեքների ուսուցման համար: Կարելի է ընտրել այնպիսի բնագրեր, որից աշակերտը կիմանա, կճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը, կգնահատի գրքի դերը անհատի ու ժողովրդի կյանքում, կձգտի սիրով, խնամքով ու հոգածությամբ վերաբերվել գրքին, իմանալ գրադարանից օգտվելու կանոնները:Արժևորի համախմբվածությունն ու միասնությունը, կարևորի ուրիշին հարգելու հատկանիշը, գնահատի արդարամտությունը:Մերժի բացասական հատկանիշները, անտարբերությունը, եսասիրությունն ու վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ:Երեխայի ընդհանուր զարգացումը առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ:

Աշակերտների խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկն է: Կապակցված խոսքի ստեղծումը, որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության ու ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, առաջին դասարանից սկսած թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքներում առանձնահատուկ տեղ ու արժեք է ստանում: Գիրքը մարդու համար անհատնում գիտելիքների աղբյուր է:

Միշտ էլ դպրոցի հիմնական խնդիրներից մեկը եղել և մնում է իր սաներին սովորեցնել սիրել գիրքը, օգտվել նրանից անընդհատ, նոր գիտելիքներ քաղել այնտեղից:Այդ ամենին հասնելու համար պետք է աշակերտների մեջ մշակել լավ կարդալու կարողություն, քանի որ լավ կարդալու կարողությունը մարդու մտավոր զարգացման և առաջընթացի հիմնական նախապայմանն է:Այս առումով լավ կարդալը տարրական դասարաններում ոչ միայն աշակերտների մտավոր ու բարոյական զարգացման հիմնական միջոցներից մեկն է, այլև մայրենի լեզվի դասընթացի գլխավոր նպատակներից մեկը, այստեղ է, որ մշակվում է, որ ձևավորվում է երեխայի մտավոր զարգացման ուժն ու կարողությունը:

Ընթերցանությունը աշակերտների մտավոր զարգացումը, նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, լեզվական պաշարի՝ բառերի, դարձվածքների, լեզվական ու արտահայտչական ձևերի ու բնորոշ համեմատությունների կուտակումն ապահովող միջոց է, այն նաև լեզվական կարողությունների՝ խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների տեղին ու ճիշտ օգտագործման համաձայնության ու կապակցության և համանման այլ կարողությունների ու հմտությունների մշակման ու զարգացման միջոց է:Ընթերցանության լեզվական խնդիրների մեջ մտնում է նաև աշակերտների բանավոր

խոսքի հետևողական զարգացումը, որպես այն հիմքի հիմքի նախապատրաստում, որի վրա բարձրանալու է աշակերտի լեզվական կարողությունների ու հմտությունների ամբողջ կառույցը է բանավոր ու գրավոր կանոնավոր ու անթերի խոսքը, լեզվի քերականության յուրացումը: Ընթերցանության միջոցով աշակերտները ավելի լավ կսկսեն տարբերել և առանձնացնելարձակ և չափածո ստեղծագործությունները, պատմվածքն ու հեքիաթը, առակն ուոտանավորը, առածը, ասացվածքն ու հանելուկը, ինչն էլ կնպաստի նրանց հետագա զարգացմանը և առաջընթացին:

Ելնելով այն կարճ ուսումնական փորձառությունից, որ բախտ եմ ունեցել անցնել կրտսեր դպրոցականների շրջանում՝ պետք է ասեմ, որ ցանկացած ուսումնական գործունեություն, որտեղ բացակայում է խաղը, սովորողի համար դառնում է անհետաքրքիր, ժամանակի աննպատակ վատնում: Նախ սկսենք նրանից, որ մարդը միշտ է խաղում, իր ողջ կյանքի ընթացքում, թեպետ կարծում է, թե հասուն տարիքում էլ չի խաղում, գործում է հավասարակշռված, բայց, ի վերջո, խաղը երբեք չի դադարում, ուղղակի փոխվում է մեկ այլ տեսակի: Փնտրում ես՝ ի՞նչ կապ կա խաղի և ընթերցանության միջև. կապ կա, այն էլ շատ ուղիղ: Եկեք երկու հարց քննարկենք. Ո՞ր գրքերն ենք մենք հիշում տարիներ անց: Հիշում ենք այն գրքերը, որոնց մեջ մենք մեր տեսակն ենք գտել կամ երազանքները, վախերն ենք հաղթահարել, եթե գիրքը իր բովանդակությամբ չի համապատասխանում ո՛չ մեր ներկային, ո՛չ հեռավոր ապագայի երազանքներին, ձգտումներին և ո՛չ էլ մեր վախերին, չի տպավորվում մեր մեջ: Կարդում ես գիրքը ու մտնում ես կերպարի մեջ՝ ապրում նրա հույզերով, ուրախանում հաջողություններով: Թվում է ՝ հանգիստ ֆիզիկական վիճակում ենք, կարդում ենք նստած կամ պառկած, բայց միտքը թևածում է՝ ստիպելով կտրվել իրականությունից: Խաղն ազատ հոգեվիճակ է: Երբ ուսումնական գործընթացի ժամանակ սովորողին ասում ես՝ դե եկեք հիմա խաղանք: Ի՞նչ է անում նա, մի՞թե չի թռչկոտում, ուրախանում, կարծես իրեն ազատեցին ծանր աշխատանքից, ուրեմն, եթե գործ ունենք երեխայի հետ, պետք է սկսել հենց նրա ազատությունից՝ խաղից:

Գրական ունկնդրումը տարրական դասարաններում

Լեզուն պահպանելու համար առաջին հերթին այն պետք է սիրել և ճիշտ գործածել:Սիրենք, պահպանենք և օգտագործենք հազարամյակներից ժառանգած մեր մեծագույն գանձը, մեր ինքնության հիմնական գրավականը՝ մեր մայրենի լեզուն: Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա, լավ թե վատ, ճիշտ թե սխալ, անընդհատ հաղորդակցվում է, արտահայտում իր մտքերը, փորձում հասկանալ ու հասկանալի լինել: Կրտսեր դպրոցի խնդիրն է օգնել երեխային ճիշտ կազմակերպելու գրավոր ու բանավոր խոսքը, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքները և հաղորդակցվել: Գրական ունկնդրումն ուսուցման կազմակերպման մի տեսակ է, որտեղ

պետք ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով երեխայի առօրյայի և ամենօրյա գործունեության հետ: Ուսումնական նշված միջավայրը նպաստում է, որ երեխան, առանց սխալվելու վախի, արտահայտի իր մտքերը, կարծիքներն ու հույզեր: Ունկնդրման համար ընտրվող գեղարվեստական գրականությունը պետք է լինի.

• Մատչելի և հետաքրքիր բովանդակությամբ, ոչ ծավալուն, պատմողական, դինամիկ զարգացող սյուժեով

• Բնության, հայրենի երկրի, կենդանիների, ճանապարհորդությունների մասին

• Երեխաների կյանքը արտացոլող, որպեսզի հիշեցնի սեփական անձի հետ կապված իրավիճակներ

• Հայ և արտասահմանյան մանկական գրականության դասականների ստեղծագործությունների ընտրանի (արձակ և չափածո)

• Ժողովրդական բանավոր ստեղծագործության նմուշներ

• Հումորային, զվարճալի պատմություններ:

Ունկնդրման միջոցով աշակերտներն ընկալում են գրական տեքստը:

Ունկնդրումը նպաստում է խոսքի, երևակայության և մտածողության զարգացմանը:

Գրական ստեղծագործության միջոցով փոխանցվող դեպքերը հուզազգայական վերաբերմունք են առաջացնում: Գրական ունկնդրման դասերը նպաստում են սովորողների բառապաշարի հարստացմանը: Ձևավորում է կենդանիների, շրջապատող աշխարհի, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք, կարդացածի վերաբերյալ կարծիք արտահայտելու կարողություն: Նրանք պարզագույն պատկերացում են կազմում շրջակա աշխարհի մասին: Ծանոթանում են հասակակիցների կյանքին, նրանց խնդիրներին: Ճիշտ ընտրված հեքիաթները,մանկական պատմվածքներն ու բանաստեղծությունները հետաքրքիր ու բովանդակալից կդարձնեն գրաճանաչության ընթացքը, կլրացնեն կարդալու և հաղորդակցվելու կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները, կլուսավորեն և կմարզեն երեխայի միտքը, կսովորեցնեն խոսել գեղեցիկ գրական հայերենով:

Մինչ երեխային ինքնուրույն ընթերցանության համար գիրք առաջարկելը՝ անհրաժեշտ է նախապատրաստել նրան նոր գրքի շուրջ աշխատանքին, այսինքն՝ ստեղծել պայմաններ, որոնց ընթացքում կարթնանա ճանաչողական հետաքրքրություն, ինչն էլ կօգնի աշակերտին հաղթահարելու կարդալու տեխնիկայի հետ կապված դժվարությունները: Աշակերտի ընթերցանության համար նախատեսված ոչ ծավալուն ստեղծագործությունը պետք է հրապուրի երեխաներին և ընթերցելու ցանկություն առաջանա:

Ընթերցանությունն էլ ավելի հաճելի է բնության գրկում

Անչափ կարևոր է ընթերցանությանը նպաստող միջավայրը: Մի բան պարզ է, որ այսօր երեխաները քիչ են կարդում: Դա էլ իր բացատրությունն ունի:Տեխնիկապես հագեցած մեր դարում հեռուստացույցը, համակարգիչը և այլ ժամանակակից սարքեր փոխարինում են գրեթե ամեն ինչին: Այնուամենայնիվ, անկախ ժամանակից և պայմաններից, գրագետ և խելացի անհատի ձևավորման գործում գրքերը մնում են առաջին տեղում: Գրականությունն ունի ճանաչողական, հոգևոր-բարոյական մեծ արժեք, որը բնութագրում է նաև հոգևոր զարգացման չափանիշները: Այսինքն՝ գրականությունը հոգեկրթիչ դեր է կատարում մարդու կյանքում, նրա համար ինքնակատարելագործվելու, դժվարությունները հաղթահարելու համար ուղիներ բացում: Ճշմարտության, բարու, խղճի, գեղեցիկի, արդարության, ազատատենչության գաղափարներն արտացոլված են գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններում: Հայ և համաշխարհային դասականների ստեղծագործությունների հերոսները հոգևոր բարձրագույն արժեքներ կրողներ են: Առանձնապես մեծ է դրական կերպարների ներգործությունը, որոնք սերունդներ են դաստիարակում իրենց խիզախության, անձնազոհության օրինակներով: Ուրեմն ինչպե՞ս երեխաների մեջ սեր արթնացնել ընթերցանության հանդեպ: Հետաքրքիր և արդյունավետ ինքնուրույն ընթերցանությունը պետք է դուրս գա գրադարանի սենյակից: Ընթերցանություն պետք է կազմակերպել նաև բնության գրկում:

Յուրաքանչյուր ընթերցանություն դարձնել տեսանելի, հուզիչ և առավել ընկալելի: Բնությունը զարգացնում է սովորողների երևակայությունը, դիտողունակությունը: Սակայն դա ինքնաբերաբար չի կատարվում: Բնության գեղեցկությունը, նշանակությունը ընկալելու, հասկանալու համար անհրաժեշտ է նախապատրաստական որոշակի աշխատանք կատարել: Երեխային պետք է դաստիարակել այնպես, որ նա ընկալի բնության հմայքը, գեղեցկությունը, լինի գեղագիտական արժեքների կրողը:Երեխաների մտքի և զգացմունքների վրա ներգործությունն ուժեղացնելու իմաստով էական նշանակություն ունեն ընթերցանությունից հետո անցկացվող զրույցները:Դրանք աշակերտներին հնարավորություն են տալիս կրկին անդրադառնալ գրքի բովանդակությանը: Միաժամանակ նպաստում են երեխայի խոսքի ակտիվացմանը և բառապաշարի հարստացմանը:

Եզրակացություն

Հարգելի գործընկերներ, իմ հետազոտական աշխատանքի եզրափակիչ մասում եկեք առանձնացնենք հետևյալ կարևոր եզրակացությունները,որոնց հանգեցինք.

1. Մեր՝ մանկավարժներիս և ծնողների, առաքելությունն ենք համարում երեխային կամ աշակերտի գործունեության ձևավորման տարբեր փուլերում օգնել , ճիշտ ուղղու վրա դնել,պատրաստել դեպի մեծ կյանք: Շատ կարևոր է, որ նրանք կյանքում հաջողակ լինելուց բացի գրագետ և զարգացած մարդիկ լինեն:Ընդունելի կլինի,որ աշակերտները ընդունակ լինեն բանավոր և գրավոր ձևերով ճանաչել, ըմբռնել, արտահայտել, ստեղծել և մեկնաբանել տարբեր հայեցակարգեր: Աշակերտի մոտ կձևավորվի լսելու, կենտրոնանալու, մտածելու, սեփական մտքերը ազատ արտահայտելու կարողության ձևավորում:

2.Ապրում ենք այնպիսի դարաշրջանում,որտեղ համացանցի և հեռուստացույցի շնորհիվ երեխան ինֆորմացիան հաճախ ստանում է վիզուալ եղանակով:Այսպիսով ուղեղը սովորում է աշխատել ավելի քիչ էներգիա սպառելով,քանի որ ընթերցանությունը ավելի բարդ պրոցես է պահանջում: Անհրաժեշտ է կրճատել տեխնիկային քանակությունը երեխայի առօրյայում:

3.Կարդալու ուսուցումը տարրական դասարաններում մայրենի լեզվի դասի հիմնական նպատակն է: Ուսուցման այբենական շրջանում երեխաների մեջ ձևավորվում են կարդալու նախնական կարողություններ:Նրանք կարողանում են կարդալ փոքրիկ բնագրեր,պատասխանել բնագրերի վերաբերյալ ուսուցչի տրված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը:

4. Փորձենք դպրոցում,տանը պայմաններ ստեղծել ընթերցանության համար: Օգտագործենք ինչպես փորձված, այնպես էլ նոր մեթոդներ աշակերտին ընթերցանության մեջ ներգրավելու համար:Համատեղ ընթերցանության կամ խաղերի միջոցով սերմանենք սեր դեպի գիրքը:

5.Գրքերի հետ ծանոթությունը նույնպես կարելի է դարձնել հետաքրքիր խաղ: Կազմակերպենք միջոցառումներ, առիթներ, մրցույթներ ընթերցանության հետ կապված: Երեխային ժամանակ տանք գրքեր ուսումնասիրելու,թերթելու, նկարներ նայելու,նախաբանը կարդալու:

6.Այսօրվա աշակերտը,վաղվա ուսանողը և հասարակության ցանկացած անդամ տիրապետելու է և տրապետում է մեդիա գրագիտության կանոններին և հմտություններին: Պատկերացնում է մեդիա աշխատանքը և դերը ժողովրդավարական հասարակությունում,կարողակում են կողմնորոշվել տեղեկատվության հոսքերում ,գտնել և տարածելտեղեկություններ, քննադատորեն վերլուծել դրանք: Այս ամենին

կարող ենք հասնել երեխաների ամբողջ ներուժը օգտագործենք ուսումնական պրոցեսում յուրաքանչյուրս մեր մասով:

7.Եվ վերջապես կարողանան վերարտադրել կարդացածը:Կարողանան հասկանալ և ներկայացնել թե ինչ նոր բան տվեց իրենց գիրքը: Որքանով ավելացավ բառապաշարը: Ինչ սովորեցին հերոսներից:Դպրոցը ՝ ընթերցանությունը խթանելու դեռ շատ աշխատանքներ ունի կատարելու,իրական արդյունքներ ունենալու համար: Եկեք զարգացնենք գրագետ հասարակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ա. Տեր –Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա,Երևան 1980:

2.Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա: Երևան, 2006

3.Նախաշավիղ ամսագիր 2006թ

4.Նախաշավիղ ամսագիր 2010թ